Մարզպանը գնաց Ատրպատական. Դայլամ դիմեց նորա դէմ, եւ երբ նորա բախմամբ միմեանց հանդիպեցան, Դայլամ անցաւ մարզպանի կողմը, որին հետեւեցին բազմաթիւ հարկատու քրդեր։ Մարզպան ապա յարձակեցաւ Դայլամի վերայ, որ իւր սակաւաթիւ ընկերներով փախաւ Հայաստան եւ պաշտպանութիւն գտաւ Հաշիք՝ ի. Դիրանիի մօտ՝ նոցա փոխադարձ սիրոյ պատճառով։

341 թ. Դայլամ քրդերից բաղկացած գնդի հետ փախաւ (Ատրպատականից) Հայաստան, որի իշխանը նորան իրենց աւարից ընծաներ ուղարկեցին...։ Ապա Դայլամ մնաց Սալմասում։ Ապստամբների գործից պրծնելով մարզպանը վերադարձաւ Ատրպատական. երբ նա մօտեցաւ Դայլամին, վերջինս թողեց Սալմաս եւ գնաց Հայաստան ի. Դիրանիի եւ ի. Հաշիքի մօտ՝ նոցա փոխադարձ հաւատարմութեան պատճառով։ Մարզպան գրեց. ի. Դիրանիին՝ ձերբակալել Դայլամին, սակայն նա մերժեց. բայց ապա՝ երկնչելով մարզպանից՝ ձերբակալեց նորան։ Այն ժամանակ մարզպան հրամայեց ի. Դիրանիին՝ Դայլամին նորա մօտ ուղարկել. ի. Դիրանի այս եւս մերժեց. բայց յետոյ կարեւոր համարեց նորան արձակել։ Երբ (ի. Դիրանի) Դայլամին արձակեց, մարզպան կուրացնել տուեց նորա աչքերը եւ դրեց նորան բանտը։ Մարզպանի մահից յետոյ նորա ընկերներից մէկը՝ երկիւղ կրելով, որ Դայլամից կարող է չարիք հասնել՝ սպանեց նորան։

346 թ. Հայաստան կը կառավարէր Ջասասատան ի. Շարմիզան (?), որ ի մոի ունէր տիրել երկրին։

353 թ. Սայֆ ալ-Դաուլա՝ի սարուկ Նաջա գնաց Միափարիքին[2] եւ (այնտեղից) դիմեց Հայաս-

---

[1] Բնագրի Հ-ՉԷ+ جاجيق ուղղելու է Ջ-ՉԷ+ جاجيق = Գագիկ որդի Դերանիկ։

[2] Մարտիրոսաց քաղաք։